Հայ լեզվաբանության 13-րդ միջազգային գիտաժողով

ԻՆԱԼԿՕ, Փարիզ

18-20 նոյեմբեր, 2026

Նվիրված Հրաչյա Աճառյանի ծննդյան 150-ամյակին

Հայ լեզվաբանության 13-րդ միջազգային գիտաժողովը տեղի կունենա ԻՆԱԼԿՕ-ում (Փարիզ), 2026 թ. նոյեմբերի 18-ից 20-ը։

Այս պարբերական միջոցառումը նպատակ ունի հնարավորություն տալ ոլորտի մասնագետներին ներկայացնելու չհրապարակված, վերջին կամ ընթացիկ հետազոտությունները և խթանել հնարավոր համագործակցությունները։ Հայտեր կարելի է ներկայացնել հայ լեզվաբանության տարբեր ոլորտների վերաբերյալ (ոչ սպառիչ ցանկ)՝

- հնչյունաբանություն,
- ձևաբանություն,
- շարահյուսություն,
- պրագմատիկա և խոսույթ,
- բառագիտություն,
- բարբառագիտություն,
- հանրալեզվաբանություն,
- փոխանցում, յուրացում և դիդակտիկա,
- կորպուսային լեզվաբանություն,
- բնական լեզվի մշակում։

Հայտերը կգնահատվեն ըստ գիտական չափանիշների և արդիականության, ինչպես նաև նյութերի նախկինում չհրապարակված լինելու հանգամանքով։

Թեմատիկ նստաշրջան՝ «Թվային հայերեն»

«Թվային հայերեն» պաստառային նստաշրջանը (1 ժամ) նվիրված կլինի հետևյալ թեմաներին՝ հայերենի բնական լեզվի մշակում, մշակութային ժառանգությանը կիրառվող համակարգչային տեսություն, ինչպես նաև լեզվական և մշակութային տվյալների թվայնացում, կառուցվածքավորման ու տարածման ոլորտներում վերջին առաջընթացներին վերաբերող հարցեր։ Այն կընդգրկի նաև երկու կլոր-սեղան (2 × 1 ժամ)։

Հայտեր կարելի է ներկայացնել թե՛ ընթացիկ նախագծերի, թե՛ միջանկյալ կամ վերջնական արդյունքների վերաբերյալ հայերենի համար թվային հումանիտար գիտությունների շրջանակում՝ տվյալների բազաների կառուցում, առցանց կորպուսների ստեղծում, անոտացիոն գործիքներ, տվյալների քաղման և վերլուծության մեթոդներ, ժառանգության նյութերի փաստագրման և ներկայացման մոտեցումներ և այլն։

Որպես օրինակներ կարելի է նշել հետևյալ թեմաները՝ հայկական ձեռագրերի ավտոմատ ճանաչում, բարբառային կամ գրավոր տվյալների աջակցված

վերծանություն և լեմմատիզացիա, տեսալսողական արխիվների ինդեքսավորում և սեգմենտավորում, հուշարձանների 3D վերակառուցում, վիմագրական և զարդանախշային մոտիվների հայտնաբերում, ինչպես նաև բառագիտական և բարբառագիտական ուսումնասիրությունների համար համագործակցային հարթակների մշակում:

Մասնակցության մանրամասներ

Հայտերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- լինեն հայերեն, անգլերեն կամ ֆրանսերեն,
- ընդգրկեն հինգ բանալի բառ (եթե հայտն անգլերեն չէ, բանալի բառերը ներառել նաև անգլերեն),
- ընդգրկեն հստակ ձևակերպված հետազոտական հարց, էմպիրիկ տվյալներ, ինչպես նաև կիրառված մեթոդաբանությունը և/կամ տեսական շրջանակը,
- ներկայացվեն երկու տարբերակով՝ անանուն և ամբողջական, որը կընդգրկի հեղինակի անուն-ազգանունը, կոչումը և հաստատությունը,
- ամփոփագրերը չգերազանցեն երկու էջ՝ ներառյալ օրինակներն ու հղումները,
- ներկայացվեն հետևյալ հարթակի միջոցով՝ https://ical13.sciencesconf.org/ (հայտ ներկայացնելու համար պետք է նախապես ստեղծել հաշիվ համապատասխան հարթակում),
- ընդունված թեմատիկ պաստառները պետք է լինեն անգլերեն կամ ֆրանսերեն և նստաշրջանի օրը տպագրված A0 ձևաչափով՝ հորիզոնական (landscape) դիրքով,
- էլհասցե՝ ical13@sciencesconf.org:

Հրավիրված բանախոսներ

Շառլ դը Լամբերտերին և Հրաչ Մարտիրոսյանը կներկայացնեն երկու բանախոսություն՝ անդրադառնալով Հրաչյա Աճառյանի գիտական ժառանգությանը: Աճառյանը ծնվել է 1876 թ. Կոստանդնուպոլսում, թեկնածուական աստիճան է ստացել École Pratique des Hautes Études-ում (Փարիզ) և եղել է Հայկական Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի տնօրենը, որն այսօր կրում է նրա անունը:

Կազմկոմիտե

1. Anaïd Donabédian-Demopoulos, INALCO, CNRS, SeDyL, IRD
2. Victoria Khurshudyan, INALCO, CNRS, SeDyL, IRD
3. Chahan Vidal-Gorene, École nationale des chartes, PSL University, Calfa
4. Samuel Chakmakjian, INALCO, CNRS, SeDyL, IRD/ERTIM

Գիտկոմիտե

1. Bernard Coulie, UCLouvain
2. Peter Cowe, University of California Los Angeles
3. Anaïd Donabédian-Demopoulos, INALCO, CNRS, SeDyL, IRD
4. Victor Katvalian, Institute of Language, National Academy of Sciences of Armenia
5. Victoria Khurshudyan, INALCO, CNRS, SeDyL, IRD
6. Petr Kocharov, Julius-Maximilians-Universität Würzburg
7. Daniel Kölligan, Julius-Maximilians-Universität Würzburg
8. Charles de Lamberterie, Académie des inscriptions et belles-lettres
9. Hratch Martirosyan, University of California Los Angeles
10. Robin Meyer, Université de Lausanne
11. Agnès Ouzounian, INALCO
12. Vladimir Plungian, Vinogradov Russian Language Institute
13. Pollet Samvelian, Université Sorbonne Nouvelle, CNRS, Lattice
14. Andrea Scala, University of Milan
15. Chahan Vidal-Gorène, École nationale des chartes PSL, CALFA

Ժամկետներ

- 2026 թ. ապրիլի 30՝ ամփոփագրերի ներկայացման վերջնաժամկետ
- 2026 թ. հունիսի 20՝ ընդունման մասին ծանուցում
- 2026 թ. սեպտեմբերի 20՝ վերջնական ծրագիր